Կարգապահական գործ թիվ ԿԳ-16072

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2016 թվականի դեկտեմբերի 02-ի թիվ 278-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/189-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԿՐՈՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Մելանյա Առուստամյանի, Խորհրդի անդամներ՝ Սիմոն Բաբայանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարդարյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության հիման վրա փաստաբան Կրոմվել Գրիգորյանի (արտոնագիր թիվ 305) նկատմամբ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

25.05.2016 թվականին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում մուտքագրվել է Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (**այսուհետ նաև՝ Դատարան**) դատավոր Արմեն Խաչատրյանի **«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու դիմումով ՀՀ փաստաբանների պալատ դիմելու մասին» 20.05.2016թ. որոշումը (այսուհետ՝ Որոշում):**

Որոշման համաձայն՝ Կրոմվել Գրիգորյանի կողմից 17.12.2015թ-ին Դատարան ներկայացված **թիվ ԵԱԴԴ/0032/11/15** գործով բողոքի քննության ընթացքում փաստաբան **Կ.Գրիգորյանն իր իրավունքներից օգտվել է անբարեխղճորեն, խոչընդոտել է դատական նիստի բնականոն ընթացքին և անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատարանի նկատմամբ: Այսպես.** «2015թ. դեկտեմբերի 17-ին դիմող Կրոմվել Գրիգորյանը բողոք է ներկայացրել Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան որով դատարանին խնդրել է «1. Բողոքը ճանաչել՝ հիմնավորված, 2. Պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին վերացնելու Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ա. Մաիլյանի 16.10.2015թ. «Քրեական հետապնդում չհրականացնելու և վարույթը կարճելու մասին» և Երևան քաղաքի դատախազ Ա. Դավթյանի 11.11.2015թ. «Բողոքը մերժելու մասին» անօրինական և չհիմնավորված որոշումները, այն է սահմանել պարտականություն՝ վարույթն իրականացնող մարմնին վերացնելու թույլ տրված օրինախախտումը և վերականգնել անձի՝ տուժող Վարդ Հայկի Զաքարյանի խախտված իրավունքները և ազատությունները»: Սույն բողոքը, որին շնորհվել է թիվ ԵԱԴԴ/0032/11/15 համարը, 2015թ. դեկտեմբերի 17-ին մակագրվել է դատավոր Մ. Մելքոնյանին և բողոքի քննարկումը նշանակվել է 28.12.2015թ.-ին ժամը 17:00-ին: Ներկայանալով նշված դատական նիստին՝

Կրոմվել Գրիգորյանը միջնորդել է դատարանին դատական նիստը հետաձգել բողոքի վերաբերյալ նյութերին ծանոթանալու համար: Դատական նիստը հետաձգվել և նշանակվել է 03.02.2016թ. ժամը 16:30-ին: ՀՀ Նախագահի 08.01.2016թ.-ի հրամանագրով դատավոր Մ. Մելքոնյանը տեղափոխվել է այլ դատարան և թիվ ԵԱԴԴ/0032/11/15 բողոքը 2016 թվականի հունվարի 19-ին մակագրվել է դատավոր Ա. Խաչատրյանիս: Թիվ ԵԱԴԴ/0032/11/15 բողոքի քննությունը նշանակվել է 29.01.2016թ. ժամը 12:30-ին, որը հետաձգվել է նաև դիմող Կ. Գրիգորյանի բացակայության պատճառով:

12.03.2016թ. Ժամը 11:00-ին նշանակված դատական նիստի ժամանակ դիմող Կ. Գրիգորյանը դատարանին միջնորդել է իրեն տրամադրել քրեական գործի նյութերի պատճենները: Միջնորդությունը բավարարվել է, իսկ դատական նիստը հետաձգվել է:

18.04.2016թ. դատարան է ստացվել դիմող Կ. Գրիգորյանի 22.04.2016թ. ժամը 10:30-ին նշանակված դատական նիստը հետաձգելու վերաբերյալ միջնորդությունը: 22.04.2016թ. ժամը 10:30-ին նշանակված բողոքի քննությունը դիմող Կ. Գրիգորյանի բացակայությամբ հետաձգվել և նշանակվել է 20.05.2016թ., ժամը 11:30-ին:

20.05.2016թ. դատական նիստի ընթացքում դիմող Կրոմվել Գրիգորյանը պնդեց, որ ինքը հանդիսանում է տուժող Վարդ Զաքարյանի ներկայացուցիչը, հետևաբար սույն բողոքով որպես դիմող հանդես է գալիս Վարդ Զաքարյանը, որին դատարանը դատական նիստի օրվա և ժամի մասին չի ծանուցել: Կ. Գրիգորյանը նշեց, որ եթե դատարանը հրաժարվում է ծանուցել տուժողին, ապա ինքը ցանկանում է ներկայացնել ինքնաբացարկի միջնորդություն: Այնուհետև Կ.Գրիգորյանը հայտարարեց, որ «դատարանի գիտելիքները չի բավարարում, ավելի շատ նախագահողի ..., օրենքը Դուք սովորեք, որ տուժողին պետք է ծանուցեք...»: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական վարույթն իրականացնող մարմնի գործողությունները և որոշումները կարող են սույն օրենսգրքով սահմանված կարգով բողոքարկվել դատավարության մասնակիցների կողմից.. »:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 31-րդ մասի համաձայն՝ «դատավարության մասնակիցներ՝ դատախազը (մեղադրողը), քննիչը, հետաքննության մարմինը, ինչպես նաև տուժողը, քաղաքացիական հայցվորը, նրանց օրինական ներկայացուցիչները և ներկայացուցիչները, կասկածյալը, մեղադրյալը, նրանց օրինական ներկայացուցիչները, պաշտպանը, քաղաքացիական պատասխանողը և նրա ներկայացուցիչը.»:ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն՝ «Տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի ներկայացուցիչը քրեական գործով վարույթի ընթացքում իրականացնում է նրանց իրավունքները, բացառությամբ վերջիններիս անձից անբաժանելի իրավունքների:

Լիազորողի շահերի պաշտպանության համար տուժողի, քաղաքացիական հայցվորի. քաղաքացիական պատասխանողի ներկայացուցիչը, սույն օրենսգրքով սահմանված կարգով, իրավունք ունի՝ ...12) բողոքարկել հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի գործողությունները և որոշումները, այդ թվում՝ դատավճիռը և դատարանի այլ վերջնական որոշումը.»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Բողոքը դատավորի կողմից միանձնյա քննվում է այն ստանալու պահից տասն օրվա ընթացքում" այդ մասին տեղյակ պահելով դիմողին և վարույթն իրականացնող մարմնին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 33-րդ մասի համաձայն՝ «դիմող՝ յուրաքանչյուր անձ, որը դիմել է դատարան, քրեական հետապնդման մարմնին՝ քրեական դատավարության կարգով խախտված իրավունքների պաշտպանության համար.»

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածի համաձայն՝ «Դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու կամ դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու կամ դատավարական պարտականություններն անհարգելի չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, դատավորի օրինական կարգադրությունները չկատարելու, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելու միջոցով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքում դատարանն իրավունք ունի քրեական դատավարությանը մասնակցող անձանց ե դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ կիրառելու հետևյալ սանկցիաները. 1) նախազգուշացում, 2) նիստերի դահլիճից հեռացնելը, 3) դատական տուգանք, 4) պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով համապատասխանաբար գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելը: .... 7. Գործի քննությանը մասնակցող դատախազի և գործի քննությանը որպես կողմի ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցող փաստաբանի նկատմամբ կարող են կիրառվել սույն հոդվածի առաջին մասի 1-ին և 4-րդ կետերով նախատեսված սանկցիաները»:

Այստեղից հետևում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին համապատասխան դատարանը որպես դիմողի ծանուցել է Կրոմվել Գրիգորյանին:

Դատարանը վերլուծելով փաստաբան Կրոմվել Գրիգորյանի գործողությունները գտնում է. որ վերջինիս դատական նիստերին չներկայանալու պատճառով ձգձգվել է բողոքի քննությունը, նա 28.12.2015թ.-ին Ժամը 17:00-ին նշված դատական նիստի ժամանակ միջնորդել է դատարանին (դատավոր Մ. Մելքոնյան) դատական նիստը հետաձգել՝ բողոքի վերաբերյալ նյութերին ծանոթանալու համար, վերջինիս միջնորդությունը բավարարվել է և դատական նիստը հետաձգվել է): Այնուհետև նախագահող դատավորի փոխվելու դեպքում իրավունք ունենալով նախապես ներկայանալու և ծանոթանալու բողոքի վերաբերյալ նյութերին /հեռախոսազանգով տեղեկացվել է, որ կարող է դրանց մինչև դատական նիստի օրը ծանոթանալ, կողմերի մասնակցությամբ կայացող 2016թ. մարտի 16-ի դատական նիստը խնդրել է հետաձգել նյութերին ծանոթանալու համար, երբևէ չի նշել իր վստահորդի բողոքի քննությանը մասնակցելու ցանկության մասին: Սույն դատական նիստի ժամանակ դատարանը որոշել է բողոքի քննությունը շարունակել դիմողի և վարույթն իրականացնող մարմնի ներկայացուցիչ հանդիսացող դատախազի մասնակցությամբ, Կ. Գրիգորյանը հայտարարել է, որ դատարանի որոշումն անօրինական է, քանի որ դիմողը հանդիսանում է տուժողը և նա չի ծանուցվել դատական նիստի մասին: Դատարանն, ըստ էության, նրան պարզաբանել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի պահանջների մասին, թե դատարանը բողոքի քննության մասին տեղյակ է պահում դիմողին (բողոքը ստորագրվել և ներկայացվել է Կ. Գրիգորյանի կողմից) և վարույթն իրականացնող մարմնին, **բայց փաստաբան Կ. Գրիգորյանը հասկանալու և ընկալելու փոխարեն հայտարարել է**), որ «**դատարանի գիտելիքները չի բավարարում, ավելի շատ նախագահողի ..., օրենքը Դուք սովորեք, որ տուժողին պետք է ծանուցեք**...»: Կ. Գրիգորյանը նույն դատական նիստում այլ կերպ նույնպես անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատարանի նկատմամբ, իր իրավունքներից օգտվել է անբարեխղճորեն և, ըստ էության, իր գործողություններով խոչընդոտել է դատական նիստի բնականոն ընթացքին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1 հոդվածի 7-րդ մասով, դատարանը որոշել է Թիվ ԵԱԴԴ/0032/11/15 բողոքով դիմող Կրոմվել Գրիգորյանի **(ՀՀ փաստաբանների պալատի անդամ, արտոնագիր թիվ 305) նկատմամբ կիրառել դատական սանկցիա և վերջինիս պատասխանատվության ենթարկելու համար դիմել ՀՀ փաստաբանների պալատին:**

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

22.06.2016թ-ին Պալատի նախագահի կողմից կայացվել է թիվ 199-Ա/ԿԳ-16072 որոշումը՝ փաստաբան Կրոմվել Գրիգորյանի (արտոնագիր թիվ 305) նկատմամբ «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով կարգապահական վարույթ հարուցելու մասին, որի համար հիմք է հանդիսացել Դատարանի՝ «Դատական սանկցիա կիրառելու մասին» 20.05.2016թ-ի որոշումը: Պալատի նախագահի հիշյալ որոշման համաձայն՝ նշված կարգապահական վարույթով դիմող է ճանաչվել Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Արմեն Խաչատրյան):
2016 թվականի հունիսի 22-ին 199-Ա/ԿԳ-16072 կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործ նախապատրաստող Ստեփան Ոսկանյանին

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Դիմողը նախապատրաստողին բացատրություն չի ներկայացրել:
Դիմողը Պալատի խորհրդի նիստին չի մասնակցել և բացատրություն չի տվել:

<u>3.2 Պատասխանողի բացատրությունը.</u>

12.07.2016թ-ին Պալատ է մուտքագրվել Պատասխանողի գրավոր բացատրությունը, հետևյալի մասին՝ «ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 22.06.2016թ. թիվ 199–Ա/ԿԳ-16072 որոշմամբ՝ «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով, իմ նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ:
Որոշման կայացման առիթ է հանդիսացել Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արմեն Խաչատրյանի թիվ ԵԱԴԴ/0032/11/15 քրեական գործով 20.05.2016թ. «դատական սանկցիա կիրառելու մասին» որոշումը:
***Անհիմն է դատարանի որոշման հետևություն այն մասին, որ** «20.05.2016թ. դատական նիստի ընթացքում դիմող Կրոմվել Գրիգորյանը պնդեց, որ ինքը հանդիսանում է տուժող Վարդ Զաքարյանի ներկայացուցիչը, հետևաբար սույն բողոքով որպես դիմող հանդես է գալիս Վարդ Զաքարյանը, որին դատարանը դատական նիստի օրվա և ժամի մասին չի ծանուցել: Կ.Գրիգորյանը նշեց, որ եթե դատարանը հրաժարվում է ծանուցել տուժողին, ապա ինքը ցանկանում է ներկայացնել ինքնաբացարկի միջնորդություն: Այնուհետև Կ.Գրիգորյանը հայտարարեց, որ «դատարանի գիտելիքները չի բավարարում, ավելի շատ նախագահողի ..., օրենքը Դուք սովորեք, որ տուժողին պետք է ծանուցեք»**, **որովհետև նախ հետևությունները աղավաղված են, դրանք այլ կերպ են տեղի ունեցել, ներկայացվում է իրականությունը, որը կայանում է հետևյալում. «Նիստերի քարտուղարի զեկուցումից հետո կարծիք եմ հայտնել, որ նախ ոչ թե ես եմ դիմողը, այլ Վարդ Զաքարյանն է և նկատի ունենալով, որ նա չի ծանուցվել միջնորդել եմ դիմողի ներկայությունն ապահովելու համար հետաձգել դատական նիստը, լսելով կողմերի կարծիքները դատարանը որոշում է կայացրել բողոքի քննությունը շարունակել առկա վիճակով, որից հետո նախագահողը դիմելով ինձ հայտարարել է, որ կարող եք**

ներկայացնել բողոքը, այնուհետև հորդորել եմ նախագահող դատավորին բողոքի քննությանը ապահովվել դիմողի ներկայությունը, սակայն նախագահողը հայտարարել է, բողոքը դուք եք ստորագրել հետևաբար դուք եք դիմողը, կարող եք այն ներկայացնել, այնուհետև իմ և նախագահողի միջև սկսվել է իրավական բանավեճ այն առումով, որ նախագահողը հայտարարում էր, որ բողոքը դուք եք ներկայացրել հետևաբար դիմողը դուք եք, իսկ ես առարկում էի, ասելով, որ դիմողը ես չեմ, և որևէ նշանակություն չունի, որ ես եմ ստորագրել բողոքը, իսկ բացի այդ էլ բողոքը ես ստորագրել եմ, որպես Վարդ Զաքարյանի ներկայացուցիչ, հետևաբար դիմողը հանդիսանում է Վարդ Զաքարյանը, որին դատարանը չի ծանուցել, կրկին հորդորել եմ ծանուցել դիմողին, նախագահողը լսերով ինձ հայտարարել է, որ դատարանը արդեն որոշում է կայացրել, կարող եք բողոքը ներկայացնել, որից հետո ես հայտարարել եմ, որ նախագահող դատավորի դեմ ունեմ ինքնաբացարկի միջնորդություն, որի կապակցությամբ խնդրել եմ ժամանակ տրամադրել, որից հետո նախագահողը դիմելով ինձ հարցրել է «Դուք դիմող ինչ-որ ժամավաճառությամբ եք զբաղված, թե ինչով եք զբաղված», որին ես հակադարձել եմ, որ «փվյալ դեպքում ժամավաճառությամբ դատարանն է զբաղված», որից հետո նախագահողը հայտարարել է, որ «դիմող դատարանը որոշեց Ձեր նկատմամբ կիրառել դատական սանկցիա նախազգուշացում, մյուս անգամ նման վարքագիծ չի կարելի դրսևորել», որից հետո նախագահողը հայտարարել է,** *որ «**ես Ձեզ քրեական դատավարության օրենսգրքի պահանջը ներկայացրեցի, ես հասկանալի է, որ դուք ծանոթ չէք նորմի այդ պահանջին, դժվար չէ կարող եք ծանոթանալ քրեական դատավարության օրենսգրքի 290–րդ հոդվածին, որտեղ հստակ, որ դուք էլ ընթերցեք կարծում եմ, որ դուք էլ կընկալեք թե ում պետք է ծանուցի դատարանը»,** որից հետո նորից բանավեճ է սկսվել, որի ժամանակ նախագահողը հայտնել է, որ «**բողոքը դուք եք ստորագրել, հետևաբար դիմողը դուք եք**», իսկ ես առարկել եմ, ասելով որ «**ոչ թե ես եմ դիմողը, այլ դիմողը Վարդ Զաքարյանն է, իսկ ես դիմողի ներկայացուցիչն եմ»,** որից հետո նախագահողը ինձ կրկին հարցրել է «ներկայացնում եք բողոքը», որին ես հայտարարել եմ, որ **«ես ունեմ ինքնաբացարկի միջնորդություն, եթե դատարանը հրաժարվում է ծանուցել տուժողին, ես միաժամանակ առարկում եմ նախագահող դատավորի անօրինական գործողությունների դեմ հայտարարելով թե իբր**», այստեղ նախագահող դատավորը միջամտել է, թույլ չի տվել միտքս ավարտեմ և դիմելով ինձ արել է հետևյալ վիրավորական արտահայտությունը. «**անօրինականը դա Ձեր իրավագիտակցության ցածր մակարդակի արդյունքում եք նման հետևության հանգում»,** որին ես հակադարձել եմ, որ «**նախագահող դատավորի մակարդակն է դա խոսում»,** նախագահող դատավոր. «**ես Ձեզ նախկինում էլ դատական նիստերին հնարավորություն ունեցել եմ Ձեզ ներկայացնելու, որ չի կարելի, որ եթե Ձեր գիտելիքները չի բավարարում, ապա չի նշանակում, որ դա»**, որին ես հակադարձել եմ, որ **դատարանի գիտելիքները, ավելի շատ նախագահողի գիտելիքները չի բավարարում, չի կարելի նման հայտարարությամբ հանդես գալ, դուք տուժողին չեք ծանուցել իմ գիտելիքները չի բավարարում՞, ես պետք է իրեն ծանուցեի՞,** նախագահող. «**դե դրա համար օրենքը սովորեք, օրենքի պահանջը իմացեք, որ»,** որին կրկին հակադարձել եմ. «**օրենքը դուք սովորեք, որ տուժողին դուք պետք է ծանուցեք, բողոքաբերը նա է, ես չեմ, ես ներկայացուցիչ եմ»**, որից հետո նախագահողը հայտարարել է, որ «դատարանը հեռանում է խորհրդակցական սենյակ Ձեր վարքագծի հետ կապված որոշում կայացնելու»:* ***Անհիմն է դատարանի որոշման հետևություն այն մասին, *որ «Դատարանը վերլուծելով փաստաբան Կրոմվել Գրիգորյանի գործողությունները գտնում է, որ վերջինիս դատական*

նիստերին չներկայանալու պատճառով ձգձգվել է բողոքի քննությունը», ***որովհետև ես ընդամենը մեկ 22.04.2016թ. նշանակված դատական նիստի չեմ ներկայացել, որովհետև դրան նախորդող կողմերի համաձայնությամբ 01.04.2016թ. նշանակված դատական նիստը տեղի չէր ունեցել նախագահող դատավորի վատառողջ լինելու կապակցությամբ և հերթական դատական նիստը նշանակվել էր առանց դատավարության մասնակիցների զբաղվածությունը հաշվի առնելու և նկատի ունենալով, որ ես 22.04.2016թ. նախապես ունեցել եմ զբաղվածություն 18.04.2016թ. դատարանի գրասենյակ եմ մուտքագրել դատական նիստը հետաձգելու միջնորդություն, երկրորդ ինչ վերաբերվում է նախորդ դատական նիստերի տեղի չունենալուն, ապա հայտնում եմ, որ 29.01.2016թ. նշանակված դատական նիստի համար ծանուցումը ստացել եմ 04.02.2016թ., 19.02.2016թ. նշանակված դատական նիստը տեղի չի ունեցել նախագահողի վատառողջ լինելու պատճառաբանությամբ, 12.03.2016թ. տեղի ունեցած դատական նիստին մասնակցել եմ, 01.04.2016թ. դատական նիստը տեղի չի ունեցել նախագահողի վատառողջ լինելու պատճառաբանությամբ, 20.05.2016թ. տեղի ունեցած դատական նիստին մասնակցել եմ:***

Անհիմն է դատարանի որոշման հետևություն այն մասին*, որ «* ***(...) /հեռախոսազանգով տեղեկացվել է, որ կարող է դրանց մինչև նիստի օրը ծանոթանալ», որովհետև նախ արձանագրվածը կեղծիք է, նման զանգ չի եղել, երկրորդ մինչև 12.03.2016թ. տեղի ունեցած դատական նիստը նման հեռախոսազանգ չի եղել, այլապես դրա մասին այդ օրը տեղի ունեցած դատական նիստի ժամանակ, երբ միջնորդություն եմ հարուցել քրեական գործի նյութերին ծանոթանալու նպատակով հետաձգել դատական նիստը, որն, ի դեպ, դատարանի որոշմամբ բավարարվել է, և նախագահող դատավորը մինչև որոշում կայացնելը չի ենթադրյալ հեռախոսազանգի վերաբերյալ ոչինչ չի հայտարարել:***

Անհիմն է դատարանի որոշման հետևություն այն մասին, որ *« (...) Կ.Գրիգորյանը նույն դատական նիստում այլ կերպ նույնպես անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատարանի նկատմամբ, իր իրավունքներից օգտվել է անբարեխղճորեն և, ըստ էության, իր գործողություններով խոչընդոտել է դատական նիստի բնականոն ընթացքին», որովհետև նախ Կ.Գրիգորյանը նույն դատական նիստում որևէ կերպ անհարգալից վերաբերմունք չի դրսևորել դատարանի նկատմամբ, և իր իրավունքներից օգտվել է բարեխղճորեն և, ըստ էության, իր գործողություններով չի խոչընդոտել դատական նիստի բնականոն ընթացքին, և երկրորդ հետևությունը բացահայտ կեղծիք է, որովհետև այն հիմնավորող որևէ ապացույց առկա չէ:*

Նախագահող դատավորը իրավական հիմքեր չի ունեցել Օրենսգրքի 314.1.–րդ հոդվածի 1–ին մասի 4–րդ կետով ղեկավարվելու և դիմողի ներկայացուցչի նկատմամբ դատական սանկցիա կիրառելու մասին որոշում կայացնելու, որովհետև ես դատարան ներկայանալուց չարամտորեն չեմ խուսափել, դատավարական իրավունքներից օգտվել եմ բարեխղճորեն, դատավարական պարտականություններս կատարել եմ հարգալից և պատշաճ, կատարել եմ դատավորի բոլոր օրինական կարգադրությունները, դատական նիստի բնականոն ընթացքը չեմ խոչընդոտել, կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելու միջոցով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք չեմ դրսևորել:

Դատարանի 20.05.2016թ. «դատական սանկցիա կիրառելու մասին» որոշումը կայացվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1.–րդ հոդվածի 1–ին մասի 4–րդ կետի պահանջների ակնհայտ և կոպիտ խախտմամբ:

Այստեղից հետևություն, որ իմ արարքներում առկա չեն Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտում և գտնում եմ, որ այդ հիմքով պետք է կարգապահական վարույթը կարճվի»:

Պատասխանողը Պալատի խորհրդին տրվել է նույնաբովանդակ բացատրություն, *հավելել, որ* ***իր կողմից վերաքննիչ բողոք է ներկայացվել ԵԱԱԴ/0032/11/15/ գործով 03.06.2016 թվականի «բողոքը քննության առնելու մասին» որոշման դեմ: Վերաքննիչ քրեական դատարանը 08.09.2016 թվականին որոշել է Վարդ Հայկի Զաքարյանի և դիմողի ներկայացուցիչ Կ.Գրիգորյանի բողոքը բավարարել՝ «Բողոքը քննության առնելու մասին» Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 03.06.2016 թվականի որոշումը բեկանել և նյութն ուղարկել նույն դատարան այլ կազմով քննության****:*

Բեկանելով դատական ակտը վերաքննիչ դատարանը պատճառաբանել է ***«առաջին ատյանի դատարանը դիմողի ներկայացուցիչ Կ.Գրիգորյանի բողոքը քննության առնելիս թույլ է տվել քրեադատավարական օրենքի էական խախտում բողոքը քննության առնելով պատշաճ կերպով չծանուցված դիմողի և գործով շահագրգիռ անձի բացակայության պայմաններում,*** *ուստի բերված վերաքննիչ բողոքը ենթակա է բավարարման, իսկ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշումը պետք է բեկանել և նյութն ուղարկել նույն դատարան այլ կազմով քննության»:*
Ի հաստատումն իր բացատրության Պատասխանողը ներկայացրել է դատական նիստի կրիչը առաջին ատյանի դատարանի 03.06.2016 թվականի որոշումը և Վերաքննիչ քրեական դատարանի 08.09.2016 թվականի որոշումը, 20.05.2016 թվականի և 03.06.2016 թվականի դատական նիստերի արձանագրությունների համառոտագրումը:

4.Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.

2016 թվականի օգոստոսի 26-ին Ստեփան Ոսկանյանի կողմից կազմվել է եզրակացություն և հանձնվել ՀՀ Փաստաբանների պալատ: Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությանը առարկություն չի ներկայացվել:

2016 թվականի օգոստոսի 29-ին 14-ին թիվ կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդի անդամ Մելանյա Առուստամյանին (նիստը նախագահող): 29.08. 2016 թվականին գործը ընդունվել է վարույթ և նիստի օր է նշանակվել նոյեմբերի 18-ին ժամը 19:30 -ին Ք.Երևան Զաքիյան փողոց 2 հասցեում: 2016 թվականի նոյեմբերի 18-ի նիստը հետաձգվել է և նիստի օր է նշանակվել 2016 թվականի դեկտեմբերի 02-ին ժամը 18:30-ին:

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

- Պատասխանող Կրոմվել Գրիգորյանը որպես Վարդ Հայկի Զաքարյանի ներկայացուցիչ 17.12.2015թ-ին Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան է ներկայացրել բողոք որով դատարանին խնդրել է՝ «1.Բողոքը ճանաչել՝ հիմնավորված, 2. Պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին վերացնելու Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ա. Մաիլյանի 16.10.2015թ. «Քրեական հետապնդում չիրականացնելու և վարույթը կարճելու մասին» և Երևան քաղաքի դատախազ Ա. Դավթյանի 11.11.2015թ. «Բողոքը մերժելու մասին» անօրինական և չհիմնավորված որոշումները, այն է՝ սահմանել պարտականություն՝ վարույթն իրականացնող մարմնին վերացնելու թույլ տրված օրինախախտումը և վերականգնել անձի՝ տուժող Վարդ Հայկի Զաքարյանի խախտված իրավունքները և ազատությունները»: (ԵԱԱԴ/0032/11/15 գործ)
- 17.12.2015թ Բողոքը մակագրվել է դատավոր Մ. Մելքոնյանին, և բողոքի քննարկումը նշանակվել է 28.12.2015թ-ին, ժամը 17:00-ին: Ներկայանալով նշված դատական նիստին՝ Կրոմվել Գրիգորյանը միջնորդել է դատարանին հետաձգել դատական նիստը՝ բողոքի վերաբերյալ նյութերին ծանոթանալու համար: Դատական նիստը հետաձգվել և նշանակվել է 03.02.2016թ-ին, ժամը 16:30-ին:
- ՀՀ Նախագահի 08.01.2016թ.-ի հրամանագրով դատավոր Մ. Մելքոնյանը տեղափոխվել է այլ դատարան և թիվ ԵԱԴԴ/0032/11/15 բողոքը 2016 թվականի հունվարի 19-ին մակագրվել է դատավոր Ա. Խաչատրյանիս:
- Դատավոր Մ. Մելքոնյանի՝ այլ դատարան տեղափոխվելու կապակցությամբ թիվ ԵԱԴԴ/0032/11/15 բողոքը 19.01.2016թ-ին մակագրվել է դատավոր Ա. Խաչատրյանին:
- Նշված բողոքի քննությունը նշանակվել է 29.01.2016թ-ին, ժամը 12:30-ին, որը հետաձգվել է 29.01.2016թ. նշանակված դատական նիստի համար Պատասխանողը ծանուցումը ստացել է 04.02.2016թ: 19.02.2016թ. նշանակված դատական նիստը տեղի չի ունեցել նախագահողի վատառողջ լինելու պատճառաբանությամբ:
- 12.03.2016թ-ին ժամը 11:00-ին նշանակված դատական նիստի ժամանակ դիմող Կ. Գրիգորյանը դատարանին միջնորդել է իրեն տրամադրել քրեական գործի նյութերի պատճենները, որը բավարարվել է, իսկ դատական նիստը հետաձգվել է 01.04.2016թ: Չեմ ներկայացել, որովհետև դրան նախորդող կողմերի համաձայնությամբ:
- 01.04.2016թ. նշանակված դատական նիստը տեղի չէր ունեցել նախագահող դատավորի վատառողջ լինելու կապակցությամբ:
- Հերթական 22.04.2016 թվականի դատական նիստը նշանակվել էր առանց դատավարության մասնակիցների զբաղվածությունը հաշվի առնելու: Պատասխանողը 22.04.2016թ. նախապես ունեցել է զբաղվածություն:
- 18.04.2016թ-ին Դատարան է ստացվել դիմող Կ. Գրիգորյանի միջնորդությունը՝

22.04.2016թ-ին նշանակված դատական նիստը հետաձգելու վերաբերյալ, որը վերջինիս բացակայությամբ հետաձգվել և նշանակվել է 20.05.2016թ-ին, ժամը 11:30-ին:

- Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում, նախագահությամբ դատավոր Ա. Խաչատրյանի, քարտուղարությամբ Մ. Սարդարյանի, մասնակցությամբ դիմող Կ. Գրիգորյանի, վարույթն իրականացնող մարմնի ներկայացուցիչ՝ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ Խ. Երեմյանի, 20.05.2016 թվականին դռնբաց դատական նիստում, քննվել է Կ. Գրիգորյանի կողմից ներկայացված թիվ ԵԱԴԴ/0032/11/15 բողոքը՝ վարույթն իրականացնող մարմնի անօրինական և չհիմնավորված որոշումները վերացնելու պահանջով:20.05.2016թ-ի դատական նիստը բացվելուց հետո Պատասխանողը *«**Նիստերի քարտուղարի զեկուցումից հետո կարծիք է հայտնել, որ ոչ թե ինքն է դիմողը, այլ՝ Վարդ Զաքարյանն է և նկատի ունենալով, որ նա չի ծանուցվել Պատասխանողը միջնորդել է դիմողի ներկայությունն ապահովելու համար հետաձգել դատական նիստը: Լսելով կողմերի կարծիքները՝ դատարանը որոշում է կայացրել բողոքի քննությունը շարունակել առկա վիճակով, որից հետո նախագահողը դիմելով Պատասխանողին հայտարարել է, որ կարող եք ներկայացնել բողոքը:** Պատասխանողը դիմել է նախագահող դատավորին բողոքի քննությանը ապահովվել դիմողի ներկայությունը, սակայն նախագահողը հայտարարել է,« բողոքը դուք եք ստորագրել, հետևաբար դուք եք դիմողը», **Այնուհետև Պատասխանողի և նախագահողի միջև սկսվել է իրավական բանավեճ այն առումով, որ նախագահողը հայտարարել է, որ բողոքը Պատասխանողն է ներկայացրել, հետևաբար Պատասխանողն է դիմողը, իսկ Պատասխանողը առարկել է, ասելով, որ դիմողը ինքը չի և որևէ նշանակություն չունի, որ ինքն է ստորագրել բողոքը, իսկ բացի այդ էլ բողոքը ստորագրել է, որպես Վարդ Զաքարյանի ներկայացուցիչ, հետևաբար դիմողը հանդիսանում է Վարդ Զաքարյանը, որին դատարանը չի ծանուցել, կրկին հորդորել է ծանուցել դիմողին: Որից հետո նախագահողը հայտարարել է, որ դատարանը արդեն որոշում է կայացրել, կարող եք բողոքը ներկայացնել, որից հետո պատասխանողը հայտարարել է, որ նախագահող դատավորի դեմ ունեմ ինքնաբացարկի միջնորդություն, որի կապակցությամբ խնդրել է ժամանակ տրամադրել, որից հետո նախագահողը դիմելով Պատասխանողին հարցրել է «Դուք դիմող ինչ-որ ժամավաճառությամբ եք զբաղված, թե ինչով եք զբաղված», որին ի պատասխան պատասխանողը հակադարձել է, որ «տվյալ դեպքում ժամավաճառությամբ դատարանն է զբաղված», որից հետո նախագահողը հայտարարել է, որ «դիմող դատարանը որոշեց Ձեր նկատմամբ կիրառել դատական սանկցիա նախազգուշացում, մյուս անգամ նման վարքագիծ չի կարելի դրսևորել»:***

- ***Նախազգուշացումից հետո նախագահողը հայտարարել է,** որ «**ես Ձեզ քրեական դատավարության օրենսգրքի պահանջը ներկայացրեցի, ես հասկանալի է, որ դուք ծանոթ չեք նորմի այդ պահանջին, դժվար չէ կարող եք ծանոթանալ քրեական դատավարության օրենսգրքի 290–րդ հոդվածին, որտեղ հստակ, որ դուք էլ ընթերցեք կարծում եմ, որ դուք էլ կընկալեք թե ում պետք է ծանուցի դատարանը»,** որից հետո նորից բանավեճ է սկսվել, որի*

*ժամանակ նախագահողը հայտնել է, որ «**բողոքը դուք եք ստորագրել, հետևաբար դիմողը դուք եք**», իսկ Պատասխանողը առարկել է ասելով որ «**ոչ թե ես եմ դիմողը, այլ դիմողը Վարդ Զաքարյանն է, իսկ ես դիմողի ներկայացուցիչն եմ**», որից հետո նախագահողը Պատասխանողին հարցրել է «**ներկայացնու՞մ եք բողոքը**», որին հետո Պատասխանողը հայտարարել է, որ **«ես ունեմ ինքնաբացարկի միջնորդություն, եթե դատարանը հրաժարվում է ծանուցել տուժողին, ես միաժամանակ առարկում եմ նախագահող դատավորի անօրինական գործողությունների դեմ հայտարարելով թե իբր**», ախագահող դատավորը ընդհատելով Պատասխանողին արել է հետևյալ արտահայտությունը. «**անօրինականը դա Ձեր իրավագիտակցության ցածր մակարդակի արդյունքում եք նման հետևության հանգում**», որին Պատասխանողը ես հակադարձել է, որ «**նախագահող դատավորի մակարդակն է դա խոսում», որից հետո** նախագահող դատավորը ասել է. «**ես Ձեզ նախկինում էլ դատական նիստերին հնարավորություն ունեցել եմ Ձեզ ներկայացնելու, որ չի կարելի, որ եթե Ձեր գիտելիքները չի բավարարում, ապա չի նշանակում, որ դա**», որին Պատասխանողը հակադարձել է, որ «**դատարանի գիտելիքները, ավելի շատ նախագահողի գիտելիքները չի բավարարում, չի կարելի նման հայտարարությամբ հանդես գալ, դուք տուժողին չեք ծանուցել իմ գիտելիքները չի բավարարում՞, ես պետք է իրեն ծանուցեի»՞**, որից հետ նախագահող դատավորը ասել է **«դե դրա համար օրենքը սովորեք, օրենքի պահանջը իմացեք, որ»**, որին Պատասխանողը հակադարձել է. «**օրենքը դուք սովորեք, որ տուժողին դուք պետք է ծանուցեք, բողոքաբերը նա է, ես չեմ, ես ներկայացուցիչ եմ**», որից հետո նախագահողը հայտարարել է, որ **«դատարանը հեռանում է խորհրդակցական սենյակ Ձեր վարքագծի հետ կապված որոշում կայացնելու»:***

(***նշված փաստը հաստատվում է պատասխանողի բացատրությամբ, դատական նիստի կրիչով):***

- 20.05.2016թ-ի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3141-րդ հոդվածի 7-րդ մասով, Դատարանը կայացրել է «Դատական սանկցիա կիրառելու մասին» որոշում և փաստաբան Կ. Գրիգորյանին պատասխանատվության ենթարկելու համար դիմել է ՀՀ փաստաբանների պալատին:

  (նշված փաստը հաստատվում է պատասխանողի բացատրությամբ, դատական նիստի կրիչով):
- **20.05.2015թ դատարանը բողոքի քննությունը հայտարարել է ավարտված և որոշման օր հրապարակել 03.06.2016 թվականը**

  (նշված փաստը հաստատվում է դատարանի 20.05.2016թ դատական նիստի համառոտագրմամբ):
- 03.06.2016թ Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 03.06.2016 թվականին որոշում է կայացրել Դիմող Կրոմվել Գրիգորյանի կողմից ներկայացված բողոքը մերժել

  (նշված փաստը հաստատվում է պատասխանողի բացատրությամբ, դատարանի 03.06.2016թ որոշմամբ):
- Վարդ Հայկի Զաքարյանի և դիմողի ներկայացուցիչ Կ. Գրիգորյանի կողմից վերաքննիչ բողոք է ներկայացվել ԵԱԱԴ/0032/11/15/ գործով 03.06.2016

թվականի բողոքը քննության առնելու որոշման դեմ: **Վերաքննիչ քրեական դատարանը 08.09.2016 թվականին որոշել է Վարդ Հայկի Զաքարյանի և դիմողի ներկայացուցիչ Կ. Գրիգորյանի բողոքը բավարարել՝ «Բողոքը քննության առնելու մասին» Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 03.06.2016 թվականի որոշումը բեկանել և նյութն ուղարկել նույն դատարան այլ կազմով քննության:** Բեկանելով դատական ակտը՝ վերաքննիչ դատարանը պատճառաբանել է **« առաջին ատյանի դատարանը դիմողի ներկայացուցիչ Կ. Գրիգորյանի բողոքը քննության առնելիս թույլ է տվել քրեադատավարական օրենքի էական խախտում բողոքը քննության առնելով պատշաճ կերպով չծանուցված դիմողի և գործով շահագրգիռ անձի բացակայության պայմաններում, ուստի բերված վերաքննիչ բողոքը ենթակա է բավարարման, իսկ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշումը պետք է բեկանել և նյութն ուղարկել նույն դատարան այլ կազմով քննության»:**
(նշված փաստը հաստատվում է Պատասխանողի բացատրությամբ, դատարանի 08.09.2016թ որոշմամբ):

- **Վերաքննիչ դատարանի որոշումը ստացել է օրինական ուժ**, որով ամրագրված է, որ **բողոքը քննության առնելով պատշաճ կերպով չծանուցված դիմող Վարդ Զաքարյանին շահագրգիռ անձի բացակայության պայմաններում, ընդհանուր իրավասության առաջին ատյանը դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված արդար դատաքննության իրավունքը:**

Նշված փաստերը հաստատվում են գործում առկա ապացույցներով, այդ թվում՝ Դատարանի Որոշմամբ, Դատարանի 20.05.2016թ. և 03.06.2016թ. որոշմամբ, ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 08.09.2016թ. որոշմամբ, Պատասխանողի բացատրությամբ, դատական նիստի ձայնագրառման կրիչով, դատարանի դատական նիստերի համառոտագրմամբ:

6. Պ<u>ատասխանողի անձը բնութագրող հանգամանքները</u>.

Համաձայն գործում առկա ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավար Գևորգ Գևորգյանի կողմից տրված տեղեկանքի փաստաբան Կրոմվել Գրիգորյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 1997 թվականի նոյեմբերի 03-ին և նրա նկատմամբ՝ 03.11.1997թ. և 2006-2015թթ ժամանակահատվածում 13 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ, որից 10-ը կարճվել է, երկու վարույթով տրվել է նկատողություն, և մեկ վարույթով տրվել է խիստ նկատողություն (տույժերը մարված են): Առկա է մեկ ընթացիկ վարույթ:

<u>7.Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը</u>.

Պալատի խորհուրդը գտնում է, որ պետք է կարգապահական վարույթը կարճել, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **(այսուհետ նաև Օրենք)** 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի*

պահանջները խախտելու համար:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 314-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է «Նախագահողի կարգադրությունները պարտադիր են դատական քննությանը մասնակցող կամ դատական նիստին ներկա գտնվող յուրաքանչյուր *անձի համար»:*

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 314.1 -րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է *«Դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու կամ դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու կամ դատավարական պարտականություններն անհարգելի չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, դատավորի օրինական կարգադրությունները չկատարելու, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելու միջոցով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքում դատարանն իրավունք ունի քրեական դատավարությանը մասնակցող անձանց և դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ կիրառելու հետևյալ սանկցիաները….4) պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով համապատասխանաբար գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելը»:*

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 314.1 -րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է **«Սանկցիան պետք է համաչափ լինի** արարքի ծանրությանը և նպատակ հետապնդի ապահովելու դատարանի գործունեության բնականոն ընթացքը»:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 314.1 -րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է «Գործի քննությանը մասնակցող դատախազի և գործի քննությանը որպես կողմի ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցող փաստաբանի նկատմամբ կարող են կիրառվել սույն հոդվածի առաջին մասի 1-ին և 4-րդ կետերով նախատեսված սանկցիաները: Գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելը իրականացվում է նույն դատական նիստում կայացվող դատարանի առանձին որոշմամբ»:

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն (Վարվելակերպի կանոնները դատարանում), *՝ փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, **<u>պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին</u>**, այդ թվում **<u>հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին</u>**: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:*

Նշված կանոնը վկայակոչող (բլանկետային) է, քանի որ հղում է կատարում փաստաբանի և դատարանի փոխհարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին:

ՀՀ դատական օրենսգրքի 89 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն*1. Դատարանում ի պաշտոնե գործելիս դատավորը պարտավոր է՝ 1) ենթարկվել օրենքին, արդարադատություն իրականացնելիս լինել անկախ և անաչառ.*

Նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն դատավորը պարտավոր է ամենուր

և ցանկացած գործունեությամբ զբաղվելիս զերծ մնալ դատական իշխանության բարձր հեղինակությանը ոչ հարիր կամ այն վարկաբեկող, ինչպես նաև դատավորին անվանարկող տպավորություն ստեղծող որևէ վարքագիծ դրսևորելուց:

***«Դատավորի վարքագծի կանոնագրքի» Կանոն 2-ը սահմանում է** «Դատավորը պարտավոր է բարձր պահել իր պատիվն ու արժանապատվությունը և խուսափել այն ամենից, ինչը կարող է արատավորել դատական իշխանության հեղինակությունը, նվազեցնել հանրության վստահությունը դատական իշխանության նկատմամբ, վնաս հասցնել դատավորի համբավին, կասկածի տակ դնել նրա օբյեկտիվությունը և անկախությունն արդարադատություն իրականացնելիս:*

***«Դատավորի վարքագծի կանոնագրքի»** Կանոն 8-ը սահմանում է «Արդարադատություն իրականացնելիս դատավորը պարտավոր է չարտահայտել իր դրական կամ բացասական վերաբերմունքը դատավարության կողմերի հանդեպ և չցուցաբերել այնպիսի վարքագիծ (միմիկա, ժեստիկուլյացիա, հեգնանք և այլն), որը դատավարության մասնակիցների կողմից կարող է ընկալվել որպես նախապրամադրվածության դրսևորում»:*

***«Դատավորի վարքագծի կանոնագրքի» Կանոն 11-ը սահմանում է** «Դատավորը պետք է լինի արժանապատիվ, համբերատար և բարեկիրթ, հարգալից վերաբերմունք դրսևորի գործով կողմերի, դատավարության այլ մասնակիցների, գործընկեր դատավորների, դատարանի աշխատակազմի և բոլոր այն անձանց հանդեպ, ում հետ առնչվում է, իր համար ընդունի այնպիսի սահմանափակումներ, որոնք կապահովեն նրա հավասարակշռվածության ու արդարամտության հասարակական ընկալումը:*

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ.-ին թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ***Կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր կողմից վկայակոչած փաստերը:***

Նույն կարգի նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ ***եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:***

<u>Գործով հավաքված ապացույցների հետազոտությունը ցույց է տալիս, որ դատավոր Ա. Խաչատրյանն՝ իր որոշման մեջ չի ներառել դատական նիստի դատական նիստի արձանագրությունն ամբողջությամբ, այսինքն՝ դատարանի որոշման նկարագրական մասում ներկայացված հանգամանքները ամբողջությամբ չեն արտացոլվել</u> *<u>դատական նիստում տեղի ունեցածը:</u> Մասնավորապես, դատական նիստի ձայնագրառման կրիչի ուսումնասիրությամբ պարզվում է, որ* 20.05.2016թ-ի դատական նիստը բացվելուց հետո Պատասխանողը ***Նիստերի քարտուղարի զեկուցումից հետո կարծիք է հայտնել, որ ոչ թե ինքն է դիմողը, այլ Վարդ Զաքարյանն է և նկատի ունենալով, որ նա չի ծանուցվել Պատասխանողը միջնորդել է դիմողի ներկայությունն ապահովելու համար հետաձգել դատական նիստը: Լսելով կողմերի կարծիքները դատարանը որոշում է կայացրել բողոքի քննությունը շարունակել առկա վիճակով, որից հետո նախագահողը դիմելով Պատասխանողին հայտարարել է, որ կարող է ներկայացնել բողոքը***: *Պատասխանողը դիմել է նախագահող դատավորին բողոքի քննությանը ապահովվել դիմողի ներկայությունը, սակայն նախագահողը ասել է, «* ***բողոքը դուք եք ստորագրել, հետևաբար դուք եք դիմողը»,*** *այնուհետև Պատասխանողի և նախագահողի միջև սկսվել է իրավական բանավեճ այն առումով, որ* ***նախագահողը հայտարարել է, որ բողոքը Պատասխանողն է ներկայացրել, հետևաբար***

Պատասխանողն է դիմողը, իսկ Պատասխանողը առարկել է, ասելով, որ դիմողը ինքը չի և որևէ նշանակություն չունի, որ ինքն է սպորագրել բողոքը, իսկ բացի այդ էլ բողոքը սպորագրել է, որպես Վարդ Զաքարյանի ներկայացուցիչ, հետևաբար դիմողը հանդիսանում է Վարդ Զաքարյանը, որին դատարանը չի ծանուցել, կրկին հորդորել է ծանուցել դիմողին: *Որից հետո* ***նախագահողը հայտարարել է, որ դատարանը արդեն որոշում է կայացրել, կարող եք բողոքը ներկայացնել,*** *որից հետո* ***պատասխանողը հայտարարել է, որ նախագահող դատավորի դեմ ունեմ ինքնաբացարկի միջնորդություն, որի կապակցությամբ խնդրել է ժամանակ տրամադրել,*** *որից հետո* ***նախագահողը դիմելով Պատասխանողին հարցրել է «Դուք դիմող ինչ-որ ժամավաճառությամբ եք զբաղված, թե ինչով եք զբաղված»,*** *որին ի պատասխան Պատասխանողը հակադարձել է, որ* ***«տվյալ դեպքում ժամավաճառությամբ դատարանն է զբաղված»,*** *որից հետո նախագահողը հայտարարել է, որ* ***«դիմող դատարանը որոշեց Ձեր նկատմամբ կիրառել դատական սանկցիա նախազգուշացում, մյուս անգամ նման վարքագիծ չի կարելի դրսևորել»:***

*Նախազգուշացումից հետո նախագահողը հայտարարել է, որ «****ես Ձեզ քրեական դատավարության օրենսգրքի պահանջը ներկայացրեցի, ես հասկանալի է, որ դուք ծանոթ չէք նորմի այդ պահանջին, դժվար չէ կարող եք ծանոթանալ քրեական դատավարության օրենսգրքի 290–րդ հոդվածին, որտեղ հստակ, որ դուք էլ ընթերցեք կարծում եմ, որ դուք էլ կընկալեք թե ում պետք է ծանուցի դատարանը»,*** *որից հետո նորից բանավեճ է սկսվել, որի ժամանակ նախագահողը հայտնել է, որ «****բողոքը դուք եք սպորագրել, հետևաբար դիմողը դուք եք»****, իսկ Պատասխանողը առարկել է՝ ասելով որ «****ոչ թե ես եմ դիմողը, այլ դիմողը Վարդ Զաքարյանն է, իսկ ես դիմողի ներկայացուցիչն եմ»,*** *որից հետո նախագահողը Պատասխանողին հարցրել է «****ներկայացնու՞մ եք բողոքը****», որից հետո Պատասխանողը հայտարարել է, որ* ***«ես ունեմ ինքնաբացարկի միջնորդություն, եթե դատարանը հրաժարվում է ծանուցել տուժողին, ես միաժամանակ առարկում եմ նախագահող դատավորի անօրինական գործողությունների դեմ հայտարարելով թե իբր****», Նախագահող դատավորը, ընդհատելով Պատասխանողին, արել է հետևյալ արտահայտությունը. «****անօրինականը դա Ձեր իրավագիտակցության ցածր մակարդակի արդյունքում եք նման հետևության հանգում****», որին Պատասխանողը ես հակադարձել է, որ «****նախագահող դատավորի մակարդակն է դա խոսում», որից հետո*** *նախագահող դատավորը ասել է. «****ես Ձեզ նախկինում էլ դատական նիստերին հնարավորություն ունեցել եմ Ձեզ ներկայացնելու, որ չի կարելի, որ եթե Ձեր գիտելիքները չի բավարարում, ապա չի նշանակում, որ դա»****, որին Պատասխանողը հակադարձել է, որ «****դատարանի գիտելիքները, ավելի շատ նախագահողի գիտելիքները չի բավարարում, չի կարելի նման հայտարարությամբ հանդես գալ, դուք տուժողին չեք ծանուցել իմ գիտելիքները չի բավարարում՞, ես պետք է իրեն ծանուցեի»՞,*** *որից հետո նախագահող դատավորը ասել է* ***«դե դրա համար օրենքը սովորեք, օրենքի պահանջը իմացեք, որ»,*** *որին Պատասխանողը հակադարձել է. «****օրենքը դուք սովորեք, որ տուժողին դուք պետք է ծանուցեք, բողոքաբերը նա է, ես չեմ, ես ներկայացուցիչ եմ»****, որից հետո նախագահողը հայտարարել է, որ* ***«դատարանը հեռանում է խորհրդակցական սենյակ Ձեր վարքագծի հետ կապված որոշում կայացնելու»:***

Այսպիսով՝ Դատական նիստի արձանագրությամբ բացահայտվում են այնպիսի հանգամանքներ, որոնք ներառված չեն դատարանի որոշման մեջ, որպիսի հանգամանքը դատարանի պատճառաբանությունները դարձնում է անհիմն:

Խորհուրդը գտնում է, որ Կրոմվել Գրիգորյանը իր դատավարական

իրավունքներից **օգտվել է բարեխղճորեն, քանի որ պահանջել է ապահովել Դիմողի մասնակցությունը՝ ծանուցել դիմողին, նրա առարկությունները բխել են ՀՀ Սահմանադրության, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթներից և ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպերից: Այն, որ Կրոմվել Գրիգորյանի պահանջը (ապահովել Վարդ Զաքարյանի պատշաճ ծանուցումը) եղել է օրինական՝ նաև հիմնավորվել է ՀՀ վերաքննիչ դատարանի 08.09.2016թ օրինական ուժի մեջ մտած ակտով:**

Մասնավորապես, վերաքննիչ դատարանը իր որոշման հիմքում դրել է

ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը Ամալյա Սերժիկի Ղարիբյանի վերաբերյալ 20.10.2011թ. թիվ ՎԴ/0008/06/11 գործով «...՝Վճռաբեկ դատարանը գտել է, որ առաջին ատյանի դատարանը կայացրած որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը դատական ստուգման ենթարկելիս պարտավոր է միջոցներ ձեռնարկել կողմերի հավասարության և մրցակցային դատավարության ապահովման ուղղությամբ: Այդ նպատակով դատարանները, ի թիվս այլ գործողությունների, պետք է պատշաճ միջոցներ ձեռնարկեն նշանակված դատական նիստի տեղի և ժամանակի մասին կողմերին ծանուցելու և վերջիններիս դատական քննությանը մասնակցելու իրավունքի անխափան իրացումն ապահովելու համար»:

Իսկ Հարությունյանի վերաբերյալ գործով թիվ ԵԿԴ/0004/11/11 որոշման մեջ ՀՀ վճռաբեկ դատարանը իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ.

« . ..24.. Առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ դատարանում բողոքաբերը մասնակից չի դարձվել Ս. Հարությունյանի կողմից ներկայացված բողոքի քննությանը: Մինչդեռ վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքերում, երբ մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության կարգով քննվող բողոքն անմիջականորեն առնչվում է անձի իրավունքներին և օրինական շահերին, ապա վերջինս պետք է տեղեկացվի այդ բողոքի դատական քննության մասին, և նրան պետք է հնարավորություն տրվի մասնակցելու նշված բողոքի քննությանը:Սույն գործով Հարությունյանի կողմից ներկայացված բողոքն անմիջականորեն առնչվում էր Ս. Ալեքսանյանի իրավունքներին և օրինական շահերին, բանի որ վերաբերում էր նրա կողմից ենթադրաբար կեղծիք կատարելու վերաբերյալ հաղորդման կապակցությամբ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշմանը: Ուստի, բողոքի քննության կապակցությամբ բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ քննություն կատարելու նպատակով Առաջին ատյանի ն վերաքննիչ դատարանների կողմից Հ. Ալեքսանյանը պետք է տեղեկացվեր վերոնշյալ բողոքի դատական քննության մասին, և նրան պետք է հնարավորություն տրվեր մասնակցելու դրա քննությանը» (տես՝ Համբարձում Հարությունյանի գործով վճռաբեկ դատարանի 2011թ. հուլիսի 13-ի թիվ ԵՎԴ/0004/11/11 որոշման 24-րդ կետը):

ՀՀ վճռաբեկ դատարանը Ս.Շահնազարյանի վերաբերյալ գործով թիվ ԵՇԴ/0002/11/14 որոշման մեջ քրեական գործով վարույթը կարճելու որոշման բողոքարկման հարցի կապակցությամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«...22. վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ Առաջին ատյանի և վերաքննիչ) դատարանները Ս.Շահնազարյանի բողոքի քննության մասին չեն տեղեկացրել Մ.Աբրոյանին ե Տ. Սեմչյանին /Տե՛ս սույն որոշման 12-րդ կետը/: Մինչդեռ ներկայացված բողոքն անմիջականորեն առնչվել է նրանց իրավունքներին և օրինական շահերին, վերաբերել նրանց կողմից ենթադրաբար խարդախություն կատարելու մասով քրեական հետապնդում չիրականացնելու վերաբերյալ որոշմանը: Հետևաբար բողոքի

կապակցությամբ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն իրականացնելու համար դատարանները պարտավոր էին տեղեկացնել բողոքի դատական քննության մասին /նշված հարցի կապակցությամբ mutatis mutandis տե՛ս Համբարձում Հարությունյանի գործով վերը վկայակոչված որոշումը/:

Արդյունքում ստորադաս դատարանները թույլ են տվել ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի խախտում» /տե՛ս Սամվել Շահնազարյանի գործով վճռաբեկ դատարանի 2015թ. փետրվարի 27-ի թիվ ԵՇԴ/0002/11/14 որոշման 22-րդ կետը/:

Վերաքննիչ դատարանը 08.09.2016թ որոշմամբ արձանագրել է.

Վերաքննիչ դատարան ներկայացված նյութերի ուսումնասիրությունից հստակ երևում է, որ սույն գործով դատավարական իմաստով դիմող է հանդիսանում Վարդ Զաքարյանը, որն իր ներկայացուցիչ, փաստաբան Կ.Գրիգորյանի միջոցով 17.12.2015թ. դիմել է դատարան՝ քրեական դատավարության կարգով ենթադրաբար խախտված իր իրավունքների օրինականության համար՝ պահանջելով վերացնել «Քրեական հետապնդում չիրականացնելու և վարույթը կարճելու մասին» Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ) Ա.Մայիլյանի 16.10.2015թ. և «Բողոքը մերժելու մասին» Երևան քաղաքի դատախազ Ա.Դավթյանի 11.11.2015թ. որոշումները:

Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում դիմողի ներկայացուցիչ Կ.Գրիգորյանի բողոքի քննության կապակցությամբ հրավիրվել են թվով հինգ դատական նիստեր 29.01.2016թ., 19.02.2016թ., 12.03.2016թ., 22.04.2016թ., և 20.05.2016թ., որոնք անցկացվել են դիմումատուի բացակայությամբ, իսկ 03.06.2016թ. կայացված որոշմամբ դիմողի ներկայացուցիչ Կ.Գրիգորյանի բողոքը մերժվել է: Վերոշարադրյալ փաստերից հստակ երևում է, որ դիմող Վարդ Զաքարյանը դատարանի կողմից ծանուցված չլինելու պատճառով հնարավորություն չի ունեցել մասնակցելու 29.01.2016թ., 19.02.2016թ., 12.03.2016թ., 22.04.2016թ. և 20.05.2016թ. դատական նիստերին և իրականացնելու իր դատավարական իրավունքները:.....»:

Խորհուրդը ապացուցված չի համարում նաև այն հանգամանքը, որ Պատասխանողի՝ դատական նիստերին չներկայանալու պատճառով է ձգձգվել բողոքի քննությունը, հետևյալ հիմնավորումներով.

Ինչպես երևում է գործի նյութերից առաջին դատական նիստը դատավոր Մ. Մելքոնյանի նախագահությամբ տեղի է ունեցել 28.12.2015 թվականին: Այդ նիստում Կրոմվել Գրիգորյանը միջնորդություն էր ներկայացրել գործի նյութերին ծանոթանալու համար ժամանակ տրամադրել:

Դատարանը բավարարել է միջնորդությունը դատական նիստը հետաձգվել է մինչև 03.02.2016թ: Սակայն Դատավոր Մ. Մելիքյանը 08.01.2016 թվականին նախագահի հրամանագրով տեղափոխվել է այլ դատարան: Բողոքը ընդունվել է Ա. Խաչատրյանի վարույթ 19.01.2016 թվականին: Ա. Խաչատրյանի նախագահությամբ առաջին դատական նիստը նշանակված է 29.01.2016 թվականին: Ըստ դատարանի որոշման այդ դատական նիստը հետաձգվել է **նաև** Կրոմվել Գրիգորյանի բացակայության պատճառով, **<u>նաևը</u>** ենթադրում է, որ դատական նիստի հետաձգման պատճառներից ընդամենը մեկն էր Կրոմվել Գրիգորյանի բացակայությունը: Բացակայում է նաև որևէ տվյալ, որ Կ. Գրիգորյանը պատշաճ ծանուցված է եղել 29.01.2016 թվականին կայացած դատական նիստի մասին: Ըստ Կրոմվել Գրիգորյանի՝ ինքը ծանուցագիրը ստացել է 04.02.2016 թվականին, իսկ

Դատարանը Կ. Գրիգորյանի պատշաճ ծանուցված լինելու վերաբերյալ որևէ ապացույց չի ներկայացրել: Բացակայում է որևէ տվյալ այն մասին, որ Կ. Գրիգորյանը մինչև 2016 թվականի փետրվարի 04-ը տեղեկացված է եղել բողոքը դատավոր Ա. Խաչատրյանի վարույթում գտնվելու մասին:

19.02.2016թ. նշանակված դատական նիստը տեղի չի ունեցել նախագահողի վատառողջ լինելու պատճառաբանությամբ, Կ. Գրիգորյանը Ա. Խաչատրյանի նախագահությամբ կայացած նիստերին առաջին անգամ մասնակցել է 12.03.2016թ. և խնդրել գործի նյութերին ծանոթանալու համար ժամանակ տրամադրել: Դատարանը միջնորդությունը բավարարել է և նիստը հետաձգվել է և նշանակվել 01.04.2016թ: 01.04.2016թ.դատական նիստը տեղի չի ունեցել նախագահողի վատառողջ լինելու պատճառաբանությամբ և հերթական դատական նիստը նշանակվել էր առանց դատավարության մասնակիցների զբաղվածությունը հաշվի առնելու: 18.04.2016թ. Պատասխանողի կողմից դատարանի գրասենյակ է մուտքագրվել 22.04.2016 թվականի դատական նիստը հետաձգելու միջնորդություն, քանի որ Պատասխանողը նախապես ունեցել է զբաղվածություն:

Պատասխանողը 20.05.2016թ. տեղի ունեցած դատական նիստին մասնակցել է:

Գործի նյութերին ծանոթանալը, ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնելու համար ժամանակ խնդրելը, Դիմող Վարդ Հաքարյանին ծանուցելու պահանջը, Նախագահողի առարկություններ ներկայացնելը Պատասխանողի դատավարական իրավունքներից են, որոնցից Պատասխանողն օգտվել է:

Դիմողի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց այն մասին, որ Պատասխանողը դատարանի կողմից հեռախոսազանգով տեղեկացվել է, որ կարող է մինչև նիստի օրը ծանոթանալ քրեական գործի նյութերին, իսկ Պատասխանողը իր բացատրությամբ այդ հանգամանքը չի ընդունել:

Խորհուրդը գտնում է, որ պատասխանող Կրոմվել Գրիգորյանի կողմից «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 4.1 կետի պահանջների խախտում թույլ չի տրվել:

Միաժամանակ Խորհուրդը գտնում է, որ Դիմող Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արմեն Խաչատրյանի վարքագիծը թիվ ԵԱԴԴ/0032/11/15 գործով 20.05.2016 թվականին կայացած նիստի ընթացքում պետք է քննարկման առարկա դարձնել ՀՀ արդարադատության Խորհրդում: Խորհուրդը արձանագրում է, որ թիվ ԵԱԴԴ/0032/11/15 գործով 20.05.2016 թվականին կայացած նիստի ընթացքում նախագահող դատավորը չի պահպանել ՀՀ դատական օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի, «Դատավորի վարքագծի կանոնագրքի» Կանոն 2-ի կանոն 8-ի, Կանոն 11-ի պահանջները և դատավորի գործողություններում առերևույթ առկա են նշված նորմերի խախտումներ, որպիսի հանգամանքը ենթակա է ստուգման: Մասնավորապես, «անօրինականը դա Ձեր իրավագիտակցության ցածր մակարդակի արդյունքում եք նման հետևության հանգում», «ես Ձեզ նախկինում էլ դատական նիստերին հնարավորություն ունեցել եմ Ձեզ ներկայացնելու, որ չի կարելի, որ եթե Ձեր գիտելիքները չի բավարարում, ապա չի նշանակում, որ դա», « դե դրա համար օրենքը սովորեք, օրենքի պահանջը իմացեք, որ» արտահայտությունները, որոնք ուղղված են իր մասնագիտական պարտականությունները կատարող փաստաբանին և իրենց մեջ պարունակում են անհարգալից վերաբերմունք Կ. Գրիգորյանի նկատմամբ, որպես

դատավարության մասնակցի, նաև հեգնանք, որոնք կարող են արատավորել դատական իշխանության հեղինակությունը, նվազեցնել հանրության վստահությունը դատական իշխանության նկատմամբ, վնաս հասցնել դատավորի համբավին, կասկածի տակ դնել նրա օբյեկտիվությունը և անկախությունն արդարադատություն իրականացնելիս:

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի, 39.8. հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից 2016թ. հունիսի 22-ի թիվ 199-Ա/ԿԳ-16072 որոշմամբ փաստաբան Կրոմվել Գրիգորյանի (արտոնագիր թիվ 305) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Կրոմվել Գրիգորյանին և Դիմողին:

3. Դիմել ՀՀ արդարադատության խորհրդին՝ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արմեն Խաչատրյանի թիվ ԵԱԴԴ/0032/11/15 գործով վարքագիծը քննարկելու համար:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն (բացառությամբ սույն որոշման եզրափակիչ մասի 3-րդ կետում նշվածի) օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Մելանյա Առուստամյան